ԿՈՄԻՏԱՍԸ ԱՔՍՈՐՈՒՄ. 1915 ԹՈՒԱԿԱՆ[1]

Խաչիկ Սամուէլեան

...Ոչ է պատմութիւն հշմարիտ առանց ժամանակագրութեան...»:

Սովսէս Խորենացի

Յունուար 1/14 Կ. Պոլիս.– *Ուսանող Աղաւնի Մեսրոպեանը իր ընկերուհիների հետ այցելում է Կոմիտաս վարդապետին՝ շնորհաւորելու նրա Ամանորի տօնը:*

«Այդ օրը,– գրում է Ա. Մեսրոպեանը իր յուշերում,– Կոմիտասի շէն տունը փոխուած էր... երգ ու երաժշտութիւն լռել էին: Երաժիշտը շրջապատուած էր իր մտերիմ ընկերներով, որոնցմէ Սիամանթոն կը խօսէր զօրակոչի նորանոր իրատէներու (հրամաններու) մասին:

«Թանկագին բարեկամ,– ասում է Սիամանթոն Կոմիտասին,– ես Թուրքին զինուոր չեմ երթար... Կեանքիս կտակը քեզ...

–Ոչ,– պատասխանում է Կոմիտասը,– ես քեզ թուրք բռնակալներուն զինուոր տուող չեմ, ոչ ալ խորամանկ թուրք կառավարութիւնը մեզպէսները ճակատ քշողն է»:

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Եր., 1960, էջ 303:

Յունուար 3/16, Կ. Պոլիս.– *Կոմիտասը տոքտոր Սիոսեանի ալբոմում գրառում է «Տողիկ» խորագրով ստեղծագործութեան նոտագրութեան երկտողը:*

Մարգարիտ Բաբայեանը վերջինիս ալբոմից արտատպում է այս «Տողիկը» եւ 1932 թուականին «Անտիպ մեղեդի մը Կոմիտաս վարդապետէն» մակագրութեամբ հրապարակում է Կ. Պոլսի «Ընդարձակ տարեցոյց» Ս. Փրկչի հիւանդանոցի» պարբերականում իր «Յուշեր Կոմիտաս վարդապետին շուրջը» խորագրով յօդուածում:

Ժամանակին նա «Տողիկը» ներկայացնում է «արուեստագէտ պ. Յարութիւն Սինանեանին» եւ ցանկանում է իմանալ նրա կարծիքը: «Երաժշտական այս պատառիկը,– ասել է Սինանեանը,– կարճ՝ բայց տխուր ու մելամաղձոտ մեղեդի մըն է, որ եթէ երկու անգամ նուագուի, ազգային եղերգութեան մը ոգին կ'արտայայտէ, վայրկեան մը թախծութեան յուզումով թաթաւուն»:

Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկչի հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1932, էջ 134: ԳԱԱ Արուեստի ինստիտուտ գրադարան:

Յունուար 9/22, ուրբաթ, Կ. Պոլիս.– *Ղալաթիոյ եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի (25-30 անձ) մասնակցութեամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:*

Մ. Թումանեան, *Պատարագի պատմութիւնը.* տե՛ս *Կոմիտասական*, գիրք 1, էջ 246:

Յունուար առաջին կէս, Կ. Պոլիս.– *Թուրքական բանակի գերմանացի մարզիչ Ֆոն դեր Զանդերսը սպարապետ Էնուերի հետ որոշում են Օսմանեան բանակի թիկունքն ապահովելու անուան տակ թուրք-ռուսական սահմանագլխի քրիստոնեայ ազգաբնակչութեանը (հայութեանը) տեղահան անելով փոխադրել պատերազմական գօտուց հեռու՝ հարաւային մարզերը:*

1 Հատուած Կոմիտասի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւնը աշխատութիւնից:

Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեան, *Հայ գողգոթան*, Եր., 1991, էջ 68:

Յունուար 20/2 փետրուարի, Կ. Պոլիս.– *Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալէաթը այցելում է Գերմանիայի դեսպան Վանկենհայմին: Նրան տեղեակ է պահում հայերի դէմ ձեռք առնելիք միջոցառումների մասին եւ խնդրում է, որ «Գերմանիան չմիջամտի կամ արգելք չըլլայ այդ ծրագիրներուն»:*

Լեւոն Վարդանեան, *Ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923*, Պէյրութ, 1975, էջ 29:

Յունուար 29/11 փետրուարի, Կ. Պոլիս.– *Վարդանաց տօնի առիթով Ազգային ժողովասրահի մէջ կենտրոնական վարժարանի կողմից տրուած հանդէսին մասնակցում է Կոմիտաս վարդապետը եւ «իր գրած «Նորահրաշով» եւ ուրիշ երգերով հմայում է ունկնդիրներին»:*

«Օրացոյց», Ս. Էջմիածին 1915, 29 յունուարի. «Տաճար», Կ. Պոլիս, 1915, թիւ 21, էջ 455:

Փետրուար սկիզբ, Ադանա.– *Թուրք բարձրաստիճան մի պաշտօնեայ իր մօտ է հրաւիրում քաղաքի հարուստ հայերից մէկին եւ ասում է նրան. «Հայոցդ գլխուն նոր փոթորիկ պիտի պայթի»:*

Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան, *Հայ գողգոթան*, Եր., 1991, էջ 74:

Փետրուար 7/20, Կ. Պոլիս.– *Կ. Պոլսի պատրիարք Զաւէն Տէր-Եղիազարեանը այցելում է Թուրքիայում Գերմանիայի դեսպան պր. Վանկենհայմին: Տեսակցութեան ընթացքում պատրիարքը իր շնորհակալութիւնն է յայտնում Բեռլինում դոկտոր Լէյբսուսի գլխաւորած գերմանոհայ միութեան կողմից հայերուս հանդէպ համակրական արտայայտութիւններ ցոյց տալու համար:*

«Տաճար», Կ. Պոլիս, 1915, 14 փետրուարի, թիւ 21, էջ 455:

Փետրուար [12-13], Կ. Պոլիս.– *Իթթիհատի կենտրոնում Թալէաթի նախագահութեամբ գումարւում է նիստ: Գլխաւոր քարտուղար Նազըմ բէյը իր զեկուցման մէջ պահանջում է. «Պէտք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռացուի... Հայերէն անհատ մը չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»: Ջարդը կազմակերպելու նպատակով ստեղծւում է «Եռեակ գործադիր յանձնախումբ» (Բեհաեդդին Շաքիր, Նազըմ բէյ Սելանիկլի, Շեաքրի բէյ): Յանձնախմբի որոշմամբ բանտից ազատւում ու հաւաքագրւում են «Թեշքիլաթը մահսուսէի» (Յատուկ կազմակերպութիւն) կոչուող խմբերը, որոնք պէտք է իրականացնէին բռնագաղթն ու ջարդը:*

Մեալան Զատէ Բիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը...*, Երեւան, 1990, էջ 98. «Ազդակ», Բէյրութ, 1964, թիւ 40:

Փետրուար, Կ. Պոլիս.– *Թուրք կառավարութեան կողմից ընթացք է տրւում հայ ժողովրդի հանդէպ ցեղասպանութիւնը կիրառելու մասին նախօրօք մշակուած եւ այժմ իրականացուող ծրագիրը:*

Փետրուար 14/27 մարտի, Կ. Պոլիս.– *«Տաճար» պարբերականի հերթական համարում տրւում է հաղորդագրութիւն «Կենտրոնական վարժարանի կողմէ, ազգային ժողովարանում» Վարդանաց տօնի առիթով տրուած հանդէսի մասին, որտեղ մասնակցել է «տ. Կոմիտաս վարդապետը, իր երգած «Նորահրաշով» եւ ուրիշ երգերով հմայելով ունկնդիրներին»:*

«Տաճար», 1915, թիւ 21, էջ 455:

Փետրուար 18, Կ. Պոլիս.– *Իթթիհատական կենտրոնը («Զեմիեթ») ձաղտնի հրա-*

© National Library of Armenia

հանգով յանձնարարում է. «Զպիտի թոյլատրուի, որ հայ մը օգնութեան եւ պաշտպանութեան արժանանայ»:

Ա. Անտոնեան, *Մեծ ոճիրը*, Բոստոն, 1921, էջ 130-133. «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 7, էջ 425:

Փետրուար 25/10 մարտի, Կ. Պոլիս.– *Պեհաէտտին Շաքիէն նամակով յայտնում է. «Զինուորական հրամանատարութեանը հարկ եղած հրահանգները տրուած են սպանութեանց գործերու կարգադրութեանց համար»:*

«Ազդակ», Բէյրութ, 1964, թիւ 40:

Մարտ 2, Ադանա.– *Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ-ն, գաղտնի ճանապարհով լուր ստանալով հայութեան հանդէպ Թուրքիայի կառավարութեան կողմից նախապատրաստուող տեղահանութեան մասին, շտապով այցելում է Սիրիայում եւ Պաղեստինում բանակի հրամանատար Շեմալ պէյին եւ խնդրում է լրացուցիչ տեղեկութիւններ իր ստացած լուրերի մասին:*

Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան, *Հայ գողգոթան*, էջ 75-77:

Մարտ [3-4], Ադանա.– *Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ-ն խորհում է իր ստացած լուրերի մասին տեղեակ պահել Զաւէն պատրիարքին: Գիշերը իր մօտ է կանչում յոյժ վստահելի վաճառական Վարդան Փրէյեանին եւ յանձնարարում է նրան տեղեակ պահել Կ. Պոլսոյ պատրիարք Զաւէն Տէր-Եղիազարեանին Թուրքիայում նախապատրաստուող հայերի տեղահանութեան ու կոտորածի մասին:*

Նոյն տեղում:

Մարտ [2-6], Կ. Պոլիս.– Յովակիմեան տուն *նորաբաց տպարանում լոյս է տեսնում Թէոդիկի* Ամենայն տարեցոյց *տարեգրքի հերթական ութերորդ հատորը, որտեղ «Հայ արուեստը երէկ եւ այսօր» ընդհանուր խորագրի տակ զետեղուած է «Կոմիտաս Վ.ի Բարիզ» հաղորդագրութիւնը՝ նուիրուած 1914 թուականի յունիսի 1-ին Փարիզում երաժշտական միջազգային գիտաժողովում Կոմիտաս վարդապետի կարդացած բանախօսութիւններին:*

Տարեգրքում հրապարակուած է նաեւ Կոմիտասի «Բժշկութիւն երաժշտութեամբ» (մէկ էջ Մայր աթոռի Ս. Էջմիածնի թիւ 2359 ձեռագրէն) վերնագրով յօդուածը՝ գրուած 1914 թուականին:

Հատորում տեղ է գտել նաեւ Կոմիտասի մշակած «Ով մեծասքանչ դու լեզու» եւ «Երի, երի, երի ջան» ժողովրդական երգերի նոտագրութիւնները:

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, Կ. Պոլիս, 1915, էջ 141-151:

Փետրուար-մարտ, Կ. Պոլիս.– *Կոմիտասը լուսանկարւում է Թերլեմեզեանի արուեստանոցում.*

Աջ ձեռքը յենած աթոռի կռնակին...

«Զուարթնոց», 1925, թիւ 6-7, էջ 255:

Մարտ 8/21, Կ. Պոլիս.– *Կիլիկիոյ Սահակ Բ կաթողիկոսի յանձնակատար Վարդան Փրէյեանը, յաղթահարելով մի շարք արգելքներ, հասնում է Պոլիս եւ տեղահանութեան տագնապալի լուրը յայտնում է պատրիարք Զաւէն Տէր-Եղիայեանին:*

Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան, *Հայ գողգոթան*, էջ 76:

Ցունուար, մարտի սկիզբ, Կ. Պոլիս.– *Զինուորագրութեան հետեւանքով երգչախումբը ցրուելուց յետոյ, ստեղծուած կացութեան թելադրանքով Կոմիտասի մէջ նոր միտք է յղանում եւ նա սկսում է «Պատարագի երգեցողութիւնները նոր ի նորոյ շարադրել» եւ իր նոր կազմած երգչախմբի կարողութիւնը նկատի ունենալով «Ցերեկը գիշերին խառնելով փոքրիկ օրգանի առ-*

ջեւ գլուխը հակած մոմիցը պլպլացող լոյսով ան գրեց ու ջնջեց, ջնջեց ու գրեց, մինչեւ որ լսեց հինաւուրց այս երգոյն մինչեւ իր որոնած հնաւանդ ձայները...

Իր աշակերտները նոյնքան խանդավառ ամէն ուրբաթ հեւիհեւ կ'աճապարէին հասնել Ղալաթիոյ եկեղեցին, յարակից մէկ սենեակ եւ լսել ջանալու այս պարզ եղանակներուն թագնուած այնքան յուզող ներդաշնակութիւնները»:

Կոմիտասական, գիրք 1, էջ 246:

Մարտ [9-10], Կ. Պոլիս.– *Կիլիկիայից ստացուած տագնապ յարուցող, հայութեան տեղահանմանը վերաբերուող լուրի առթիւ, Պոլսոյ պատրիարք Զաւէն Տէր-Եղիազարեանն այցելում է Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Վերջինս հանգստացնում է պատրիարքին՝ հաւաստելով ստացուած լուրի սնանկ լինելը: Պատրիարքը իր ստացած տեղեկութիւնը յայտնում է Սսի կաթողիկոս Սահակ Բ-ին:*

Գ. Պալաքեան, *Հայ գողգոթան*, էջ 76:

Մարտի սկիզբ, Կ. Պոլիս.– *«Երկու-երեք ամիսների ընթացքում,- գրում է Միհրան Թումաճեանը,- Պատարագի խմբական մասը ամբողջովին վերծանւում է Կոմիտաս վարդապետի կողմից... Մնում էր սարկաւագի եւ քահանայի բաժինները միացնելու ընդհանուր փորձը, որը պէտք է իրականացուէր Ծաղկազարդի կիրակի օրը:*

Մ. Թումաճեան, *Պատարագի պատմութիւնը.* տե՛ս *Կոմիտասական*, գիրք 1, էջ 247:

Մարտ 13/26- 20, Կ. Պոլիս.– *Սիամանթոն այցելում է Կոմիտասին: Զրոյցի հիմնական թեման հանդիսանում է Թուրք ոստիկանութեան կողմից «Ամենուն տարեգրքի» խմբագիր Թէոդիկի ձերբակալութիւնը: «Կարծես թէ անոնք,- գրում է զրոյցին ներկայ, յուշագիր Աղաւնի Մեսրոպեանը,- կը խոկային ահաւոր տեսլապատկերի առջեւ... Տարիներ ի վեր առաջին անգամ ըլլալով Կոմիտասը կը տեսնէինք այդ աստիճան ընկճուած»:*

Ժամանակակ. Կոմիտասի մասին, էջ 304:

Մարտ [14/27], Կ. Պոլիս.– *Թուրք պետական գործիչներ Թալէաթ պէյի, Թագաժառանգ Մէջիտ իշխանի եւ բարձրաստիճան այլ անձանց ներկայութեամբ տեղի է ունենում «Թուրք օջախի» հերթական գրական-երաժշտական հանդէսը:*

Բացման խօսքով հանդէս է գալիս «Թուրք օջախի» նախագահ Համտուլլահ Սուպհի պէյը: Ներկայացնելով իր հետ բեմահարթակ եկած Կոմիտաս վարդապետին՝ բանախօսը անդրադառնում է Կոմիտասի մեծութեանը, բարձր է գնահատում նրա գործադրած ջանքերը եւ ցուցաբերած եռանդը գեղջուկ երգերի մշակման գործում: Արժէքաւորելով նրա վաստակը՝ բանախօսը կոչ է անում թուրք հոգեւորականութեանը հետեւել նրա օրինակին: Այնուհետեւ խօսելով Թուրքիայի մշակութային կեանքում հայ մտաւորականութեան ունեցած դերը՝ ըստ ամենայնի բարձր է գնահատում ներդրուած աւանդը:

Նախագահի բացման խօսքից յետոյ դաշնամուրի նուագակցութեամբ ելոյթ է ունենում Կոմիտասը եւ կատարում է «Կռունկ», «Հով արէք սարեր ջան» եւ «Կալի երգ» մշակումները: «Մաշալլա՜հ, Աստուած չար աչքից հեռու պահի...»,- լսւում է դահլիճից թուրքերէն բացագանչութիւնները:

Ըստ յուշագրողի հաւաստիացման՝ Կոմիտասը կարդացել է բանախօսութիւն եւ կատարել է իր մշակած թուրքական ժողովրդական երգերից մի քանիսը:

«Էջմիածին», 1968, թիւ 3, էջ 46-48. «Արաքսանի», Փարիզ, 1943, էջ 66:

Մարտ 15/28, Ծաղկազարդի կիրակի, Կ. Պոլիս.– *Կոմիտասի ղեկավարած երգչա-*

© National Library of Armenia

խումբը հաւաքւում է կենտրոնական վարժարանի ամֆիթատրոնում, կատարւում է պատարագի վերջին միացեալ փորձը: «Այդ օրը,- պատմում է փորձի մասնակիցը,- պատարագի ամբողջական փորձը սկսաւ հեշտօրէն ընթանալ: Հասած էինք վերջաւորութեան՝ Գոհանամք զքեզ Տէր-ին: Սկզբնական երկու մասերը մէջընդմէջ, մեներգ եւ խմբերգ, զմայլելիօրէն շաղաղուած կ'երգուէին»:

Կոմիտասական, գիրք 1, էջ 247:

Մարտ սկզբից մինչեւ 20, Կ. Պոլիս.- *Զարուհի Գալեմքերեանը Դանիէլ Վարուժանին երկիւղ է յայտնում իթթիհատականների «ներքին զգացումներուն եւ հայատեաց բնազդներուն» վերաբերեալ: Վարուժանը նրան հանգստացնում է: «Տակաւին նախորդ երեկոյ,- ասում է նա,- Զոհրապը Թալէաթին հետ ծունկ-ծունկի բոքեր խաղացեր են, լաւ են իթթիհատական տրամադրութիւնները» մեր վերաբերեալ:*

Զարուհի Գալեմքերեան, *Կեանքիս ճամբէն*, Անթիլիաս, 1952, էջ 98-100:

Մարտ 21/3 (հ.տ.) ճրագալոյց Զատիկ, Կ. Պոլիս.- *Ղալաթիոյ եկեղեցու կամարների տակ առաջին անգամ Կոմիտասի ղեկավարած 25-30 հոգուց բաղկացած երգչախումբը հնչեցնում է «Հինաւուրց երգերու պատարագը»,- գրում է Կոմիտասի սան, պատարագի մասնակից Միհրան Թումաճեանը:*

«Էջմիածին», 1968, թիւ 3, էջ 44-45. *Կոմիտասական*, գիրք 1, էջ 248-249:

Մարտ 22/4 (հտ) ապրիլի (կիրակի) Կ. Պոլիս.- *Առաքելական եկեղեցու շուրջը համախմբուած հայութեան խուռն բազմութեան ներկայութեամբ Կոմիտաս վարդապետի գլխաւորած երգչախումբը Ղալաթիոյ եկեղեցու կամարների տակ իրականացնում է Քրիստոսի յարութեան տօնը՝ Զատկուայ արարողակարգը:*

«...Վարդապետի հրաշափառ շունչով օժտուած հինաւուրց երգերու Պատարագը,- գրում է Պատարագի ունկնդիր Ճ. Հ. Սիրունին,- մատուցուեցաւ Ղալաթիոյ եկեղեցիի հնաբոյր կամարներուն տակ...»:

«Էջմիածին», 1969, թիւ 3, էջ 45:

Մարտ 23/5 ապրիլ, Կ. Պոլիս.- *Զատկի երկրորդ օրը Իտալական Թեւտօնիա սրահի մէջ տեղի է ունենում Կոմիտաս վարդապետի համերգը, ուր ներկաների հոգին գինովանում էր Կոմիտասի անուշ երգերով:*

«Էջմիածին», 1968, թիւ 3, էջ 44:

Մարտ 15-30, Կ. Պոլիս.- *Արաբատառ «Սապահ» թուրքական լրագրի մէջ թուրք մտաւորական Համտուլլահ Սուպհին դրուատական յօդուած է հրատարակում մարտի 14/27-ին «Թուրք օջախում» Կոմիտաս վարդապետի կարդացած բանախօսութեան մասին:*

«Էջմիածին» 1968, թիւ 3, էջ 47-49:

Ապրիլ 2/15, Կ. Պոլիս.- *Թուրք պետական գործիչներ Թալէաթի, Էնվերի եւ Նազըմ բէյի ստորագրութեամբ հրաման է ուղարկւում տեղական իշխանութիւններին հայերին բնաջնջելու եւ արաբական անապատները քշելու վերաբերեալ:*

Հայ ժողովրդի պատմութիւն, Եր., 1981, հտ. 6, էջ 553:

Ապրիլ 7/20, Էջմիածին.- *Տաճկաց Հայաստանում կիրառուող դաժան կոտորածները եւ Կաթողիկոսի հասցէով տեղ հասած վշտախառն դիմումները հիմք են դառնում եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Է. հեռագրով պաշտօնական դիմումներ է յղում Կովկասի փոխարքայ կոմս Վորոնցով Դաշկովին, Ռուսաց Արտաքին գործոց նախարար Սազոնովին, Իտալիայի թագաւոր Վիկտոր Էմանուել երրորդին, Ամերիկայի Միացեալ Նահանգների հանրապետութեան*

նախագահ Վիլսոնին, Անգլիայի թագաւոր Գէորգ չորրորդին, Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Պուանկարէին:

«Արարատ», Էջմիածին, 1915, թիւ Բ-Գ, էջ 170-175

Ապրիլ 7/20, երեքշաբթի, Կ. Պոլիս.- *Նկատի ունենալով, որ քաղաքական իրադարձութեան հետեւանքով Կ. Պոլսում դրութիւնը լարուած է՝ Էսայեան սանուց միութիւնը նպատակայարմար է գտնում թուրք վիրաւոր զինուորների օգտին Կոմիտասի մասնակցութեամբ տրուելիք ցերեկոյթը յետաձգել:*

«Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը,- գրում է Սիրունին,- թէ յետաձգած ենք հանդէսը: Լաւ էք ըրեր մրմնջեց, ուրիշ խօսք չըրաւ»:

«Էջմիածին», 1968, թիւ 1, էջ 17:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.- *Վաղ առաւօտ Սիրունին վստահելի աղբիւրներից լուր առնելով, որ այդ օրը «պիտի բացուեն ոստիկանատներուն ղրկուած գոց պահարանները», շտապում է Կոմիտասի մօտ: «Գէշ եղաւ եմ տեսած Սիրունի,- ասում է նրան Կոմիտասը,- այսօր անպատճառ բան մը պիտի պատահի... Թող պատահի,- ասում է Կոմիտասը,- իրմէ բաժանուած պահուն»:*

«Հոգեկան իր անդորրութիւնը,- շարունակում է Սիրունին,- կ'ապշեցնէ զիս: Քիչ անգամ մարդը կրնայ այդքան քաջ ըլլալ փոթորիկը մօտեցած ատեն»:

«Էջմիածին», 1968, թիւ 1, էջ 48:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.- *Հ. Սիրունու բերած տագնապալից լուրը ստանալուց յետոյ, օրուայ երկրորդ կէսին, Կոմիտասը երգչախմբի փորձը ղեկավարելու համար մեկնում է Ղալաթիոյ եկեղեցի:*

Կոմիտասը երգչախումբը նախապատրաստում էր, կարմիր կիրակի օրուայ, ապրիլի 12-ին, Ղալաթիոյ եկեղեցում տրուելիք հանդիսաւոր պատարագի համար:

«Մութը իջած էր եւ ամէն ոք կ'աճապարէր իր տեղ հասնիլը,- պատմում է Միհրան Թումաճեանը... Իսկ անոնք, որ Բերայի կողմերը կը բնակէին, վարդապետի շուրջը բոլորուած, խօսալով ու խնդալով կը բարձրանային Ղալաթիոյ զառիվերէն, դէպի Բերայ եւ Բանկալթ»:

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1926, էջ 445. «Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 28:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.- *Զաւէն Եղիազարեան պատրիարքին այցելում է գերմանական դեսպանատան պաշտօնեայ դոկտոր Մորթմանը, որը ի պաշտօնէ պէտք է կապ պահպանէր պատրիարքարանի հետ: Վերջինս առաջարկում է պատրիարքին հայ, թուրք եւ գերմանացի յանձնաժողովներ ուղարկել գաւառները, համերաշխութեան կապերը ամրապնդելու համար:*

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 29:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.- *Գիշերը ոստիկանները ձերբակալում են Կոմիտաս վարդապետին, տանում են կենտրոնական բանտ եւ նետում են «Սիւպիաներու խուվուշը»:*

Կոմիտասը յուսադրում է յուսալքուած բանտարկեալներին, ամբողջ գիշեր մխիթարում է լացող դոկտոր Թորգոմեանին:

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 32-34. «Արեւմուտք», Փարիզ, 1946, թիւ 5-6. «Ցառաջ», 1935 հոկտ. 27, թիւ 2946:

Ապրիլ 11/24, գիշերը, Կ. Պոլիս.- *Զինուորական աւտոբուսները քաղաքի հեռաւոր ու մօտակայ արուարձաններից եւ թաղերից խումբ-խումբ մտաւորական կալանաւորներին փոխադրում են կենտրոնական բանտ:*

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 32-34:

© National Library of Armenia

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.– *Ոստիկանութեան նախապէս կազմած ցուցակով Կ. Պոլսում ձերբակալում են 235 մտաւորականի, որոնց թւում Կոմիտասին, Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբէն Սեւակին, Ռուբէն Զարդարեանին եւ այլոց:*

Ձերբակալութիւնները շարունակւում են նաեւ յաջորդ օրերի ընթացքում: Ձերբակալուածների թիւը հասնում է 800-ի, որոնց ուղարկում են մի մասին՝ Զանղրի, միւսներին՝ Այաշ:

Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. 6, էջ 553-554:

Ապրիլ 12/25, առաւօտ, Կ. Պոլիս.– *Կոմիտասի վանեցի սպասաւոր Կարապետ վարդապետը ամբողջ գիշեր սպասում է Կոմիտասի վերադարձին: «Առտու կանուխ տեսնելով, որ Կոմիտասը դեռ չի դարձած՝ կը փութայ դոկտ. Նագաշեանի տունը, գրեթէ հեւալով եւ այնքան յուզուած», որ չի կարողանում մի բառ արտասանել: Վերջապէս նրան յաջողւում է խօսել եւ կարողանում է ողբագին շեշտով ասել.*

«Տարա՜ն, տոքթոր տարա՜ն...
Տօ՛, ի՞նչ տարան:
Հայը սուրբ տարան
Տօ ա՛յ տղայ ո՞վ տարաւ
Բոլիսները տարան գիշերը տարան...

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 32:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս.– *Կոմիտասի մերձաւոր բարեկամ Կարօ Ուշագլեանը առաւօտեան մտնում է Բանկալթի ծանօթ դեղատունը՝ իր բարեկամի մօտ: «Ներս մտաւ բժ. Ա. Նագաշեանը,– պատմում է Ուշագլեանը,– գլխաբաց եւ շփոթ: –Տղաք, Կոմիտաս վարդապետը տարած են այս գիշեր... Շշմած իրարու նայեցանք, ո՛չ մէկ նշանակութիւն կրցանք տալ եղածին: Քիչ վերջ ուրիշներ եկան եւ սկսան թուել ուրիշ կալանաւորներու անուններ, բոլորն ալ հանրածանօթ մտաւորականներ: Մեր զարմանքը վախի փոխուեցաւ»:*

«Արագած», 1943, էջ 66-67:

Ապրիլ 12/25, կարմիր կիրակի, Կ. Պոլիս.– *Ղալաթիոյ եկեղեցում առաւօտեան հոգեւոր արարողութիւնը աւարտելուց յետոյ Կոմիտասի աշակերտները ըստ սովորութեան այցելում են իրենց սիրելի վարդապետին: «Դեռ չէինք մօտեցել Կոմիտասին,– պատմում է Թումանեանը,– երբ դիմացնին կ'ելլէ իրենց ընկերներէն մինը, որ առանց կանգ առնելու կը փսփսայ...*

– Շուտով տուններդ դացէ՛ք... հեռացէ՛ք... իրարմէ զատուեցէ՛ք...

Չհասկացանք թէ ինչու:

Հասնելով վարդապետի տունը՝ սեղմում են զանգակը: Վարդապետի ծառան բացաւ դուռը:

Այլայլուած կմկմաց.– Խայր սուրբին տարան...

Կոմիտասական, գիրք 1, էջ 249-250. «Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 31:

Ապրիլ 12/25, առաւօտ, Կ. Պոլիս.– *Բանտի դռները բացւում եւ հրապարակ է գալիս Կոմիտասը. «Երբ մեզ մօտ եկաւ Կոմիտասը,– գրում է Ա. Անտոնեանը,– իր վիճակի վրայ չէր խորհեր, կամ գոնէ ներքին վրդովմունք մը մատնող բառ մը չարտասանեց... յոյս ունէր թէ այդ կատակը երկար չի տեւեր...»:*

«Արեւմուտք», 1947, թիւ 6, էջ 2:

Ապրիլ 12/25, կիրակի.– *Զօրանոցային կեանքի առաջին օրը... «Մէկէն մեր խմբին մէջ ներշնչումի պէս կը ծնի հաւաքականօրէն աղօթելու պէտքը: Իսկոյն կը հաւաքուինք մեր բնակութեանը սահմանուած սրահը... Մէկ քանի մոմերու վախկոտ լոյսերուն տակ... Քահանան Աւետարան կը կարդայ, պատուելին փառաբանութիւնը կ'ընէ, աշխարհականը շարական կ'երգէ եւ Կոմիտաս վարդապետը Տէր ողորմեան կ'աղերսէ. «...տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց ազատութիւն»:*

Միքայէլ Շամտաճեան, *Հայ մտքին հարկը եղեռնին*, Հալէպ, 1947, էջ 54:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս.– *Կոմիտասին 192 ձերբակալուածների հետ ոստիկանատնից տեղափոխում են Կ. Պոլսի կենտրոնական բանտ: Ձերբակալուածներին արտօնւում է դուրս գալ բանտի բակը եւ «բաց քարտերու վրայ» միայն թուրքերէնով նամակ գրել ընտանիքին՝ խնդրելով անկողին, դրամ, սպիտակեղէն եւ ուտելիք:*

«Արեւմուտք», 1946, թիւ 6, 1947, թիւ 7-8:

Նոյն օրը, երեկոյեան.– *Ոստիկանութեան տնօրէն Պետրի բէյի եւ բանտի տնօրէն Իբրահիմ էֆենդիի կարգադրութեամբ բակ են կանչւում ձերբակալուածները: Յանձնարարական ցուցակով առանձնացնում են 71 մարդ, որոնց թւում Սիամանթոյին, Ռուբէն Զարդարեանին, Գեղամ Բարսեղեանին, Տիգրան Զոկիւրեանին:*

Տեղաւորելով կառքերում՝ տանում են անյայտ ուղիով: Մնացած ձերբակալուածներին՝ Կոմիտասին, Վարուժանին, Տաղաւարեանին, Ճանկիւլեանին, Շահրիկեանին, բոլորին շարք են կանգնեցնում եւ սուինաւոր զինուորների հսկողութեամբ գիշերը, Գիւլհոնէի ծառուղիով սուլթան Ահմեդի, Այա Սոֆիայի հրապարակներով տանում են Սարա պուրնուգի նաւամատոյցը:

«Արեւմուտք», 1946, թիւ 47, 6, 7-8, 12:

Երբ թոյլատրում են, որ աքսորականները կարող են նամակ գրել, ըստ Ենովք Շահի վկայութեան ասել է թէ Կոմիտասից ստացուել է երկու քառ: Մէկը իր տան հասցէով ապահովաբար Կարապետ վարդապետին, իսկ միւսը՝ Ամերիկեան դեսպանատան թարգման պր. Արշակ Շմաւոնեանին: «Վարդապետը,– գրում է յօդուածագիրը,– ծանօթ դէմք մըն էր Ամերիկեան դեսպանատան մէջ, ուր շատ կը սիրէին զինքը: Տիկին Մորկընթաուն յաճախ կը հրաւիրէր զայն իր երեկոյթներուն եւ Կոմիտասը կ'երգէր ու կը նուագէր ընդունելութեան ընթացքին»:

«Արեւմուտք», Կ. Պոլիս, 1947, թիւ 7, էջ 9. «Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 35:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, գիշեր, բանտ.– *Կարդացւում է աքսոր գնացողների երկրորդ ցուցակը՝ Տիրան Քելեկեանից յետոյ կարդում են երեք վարդապետների՝ Պալագեանի, Յովհաննէս Կարապետեանի եւ ապա չորրորդը՝ Կոմիտաս վարդապետի անունները:*

Բակում հաւաքուած խումբը հրամանի համաձայն Կիւլհանների ծառախիտ ուղիով ուղեւորւում է Սառա Պրունուի նաւամատոյցը:

Կալանաւորները տեղաւորւում են Շիրքեթը խայրիյէի թիւ 42 շոգենաւի մէջ:

«Արեւմուտք», 1947, թիւ 13, 16 փետրուարի, էջ 7:

Ապրիլ 12/25.– *Թիւ 42 շոգենաւով տանում են բանտարկեալներին: Տիրան Քելեկեանը, դոկտոր Թորգոմեանը, Հայկ Խօճասարեանը եւ Կոմիտաս վարդապետը տեղաւորուած էին առաջին կարգի սալոնում, այստեղ է գալիս նաեւ Բիւզանդ Քէչեանը:*

Կոմիտասը նստած էր դոկտոր Տաղաւարեանի եւ բժիշկ Թորգոմեանի միջեւ. «Երկու բժիշկները կու լային,– գրում է «Արեւմուտքի» յօդուածագիրը,– Կոմիտասը մէյ մը մէկուն, մէյ մը միւսին կ'ուղղէր շատ անհանգիստ արտայայտութեամբ մը վառուած աչքերը: Երբեմն Տաղաւարեանի կամ Թորգոմեանի կողմը հակուելով, բաներ մը կը մրմնջար, թերեւս մխիթարութեան կամ քաջալերութեան խօսքեր...»:

«Արեւմուտք», 1947, մարտ 2, թիւ 15, էջ 7:

© National Library of Armenia

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս.– *Գիշերը Շիքեթի 67 թիւ շոգենաւով Կիլիկիանէի բարաքից վերցնում են կալանաւորներին ու Սարա պուրունէն անցնելով բռնում են անծանօթ ուղղութիւն: Նաւն ուղեւորւում է դէպի Հայդար-բաշայի նաւահանգիստը, ուր սպասում են շոգեկառքին:*

Կալանաւորների մէջ էր նաեւ Կոմիտաս վարդապետը:

Նոյն տեղում:

Ապրիլ 13/26, առաւօտեան.– *Սարա Պուրնոյի ձերբակալուածներին տեղաւորում են Շիրքեթի թիւ 67 շոգենաւում, սրանց են միացնում նաեւ կառքով այստեղ հասած միւս 71 ձերբակալուածներին եւ բոլորը միասին ճանապարհ են ընկնում դէպի Հայդար փաշայի երկաթուղային կայարանը:*

«Արեւմուտք», 1946, թիւ 6, 1947, թիւ 7-8:

Ապրիլ 13/26, Հայդար Փաշայ.– *Տեղաւորուելով գնացքում՝ Նիկոմեդիայի ու Պիլեճիկի վրայով ձերբակալուածների կարաւանը (որոնց մէջ էր նաեւ Կոմիտաս վարդապետը) գիշերը հասնում է Էսկիշեհիր:*

«Արեւմուտք», 1947, թիւ 18:

Ապրիլ 13/26, կէսգիշեր.– *Կալանաւորները հասնում են Էսկիշեհիր: Երկու ժամ մնալուց յետոյ այստեղ կազմւում է կալանաւորների ցանկը՝ պատրիաքարան ուղարկելու համար: Կէսգիշերին գնացքը Էսկիշեհիրից ուղեւորւում է Անկարա:*

«Արեւմուտք», 1947, թիւ 18, էջ 7:

Ապրիլ 13/26, երեկոյ.– *Աքսորականների կարաւանը (որոնց մէջ էր նաեւ Կոմիտասը) հասնում է առաջին հանգրուանին՝ Ռաւլիի խան:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 5:

Ապրիլ 13/26, լուսաբաց.– *Կալանաւորների գնացքը հասնում է Նիկոմեդիա:*

Կոմիտասը միւս հոգեւորականների հետ գտնւում էր Բ կարգի վագոնում, այստեղ էին նաեւ Քելեկեանը, Նագաչեանը, Քեչեանը, Թորգոմեանը, Տաղաւարեանը եւ այլք:

Նիկոմեդիայում Կոմիտասը, Յովհաննէս եւ Պալագեան վարդապետները աղերսագիր են ներկայացնում կառավարութեանը, որ իրենց աքսորավայրը որոշուի Արմաշի վանքը:

«Արեւմուտք», 1947, թիւ 17 (մարտի 16), էջ 8:

Ապրիլ 13/26, առաւօտ.– *Գնացքը կանգ է առնում Անկարային չհասած Սընճան Քեռ փոքր կայարանում:*

Ցուցակով 71 հոգու առանձնացնում եւ տանում են Այաշ:

«Արեւմուտք», 1947, թիւ 18, էջ 8:

Նոյն օրը, երկու ժամ անց.– *Գնացքը կալանաւորներին հասցնում է Էնկիւրայ Անկարա: Այստեղ կալանաւորներին գնացքից իջեցնում եւ տեղաւորում են ձիակառքերի մէջ: Իւրաքանչիւր կառքում տեղաւորում են երեքական անձ եւ յայտնում են, որ կառքերը ուղեւորւում են Զանղրը:*

«Արեւմուտք», 1947, թիւ 20 (ապրիլ 6), էջ 7:

Ապրիլ 13/26, երեկոյ.– *Կալանաւորների քարաւանը ձիակառքերով հանգրուանում է Ռաւլի խան բնակավայրում:*

Նոյն տեղում:

Ապրիլ 14/27, Ռաւլի խան.– *Խիստ ծարաւած, կալանաւորների եւ կառապանների խմելու ջրից օգտուելու ժամանակ տեղի է ունենում միջադէպ: Պարզւում է, որ կառապանն ու ժանդարմները դոյլերի պակասի հետեւանքով ծանր վիճակի մէջ են ջրհորից ձիերին ջուր տալու համար: Այդ ժամանակ ծարաւած կալանաւորները նոյնպէս մօտենում են ջրհորին իրենց ծարաւը յագեցնելու համար: «Իրենցմէն ամէնէն անհամբերը,– գրում է Արամ Անտոնեանը,– Կոմիտասն էր»: Դոյլով մատուցում են ջրհորի ջուրը, սակայն գաւաթ կամ որեւէ հնարաւորութիւն չկար ջրից օգտուելու համար:*

Ճիշտ այն պահին, երբ Կոմիտաս վարդապետը «շրթունքը ցցած» ձեռքը մեկնում է ջրով լիքը դոյլին, ձիաւոր ժանդարմներից մէկը բիրտ հարուածով Կոմիտասի ձեռքից կոպտօրէն խլելով լեցուն ջրամանը՝ ջուրը չռփում է Կոմիտասի երեսին, որն սկսում է կաթկթել մօրուքից: Վախեցած Կոմիտասը կրում է ընդհարման վտանգ եւ երկու քայլ նետւում է ետ: Միջադէպն ունենում է ցնցող վախճան Կոմիտասի համար:

«Արածանի», 1947, մայիս 4, թիւ 24, էջ 8:

Ապրիլ 14/27, երեկոյ, Ռաւլի.– *Ժանդարմի գործադրած բռնութիւնից յետոյ Կոմիտասի մօտ սկսւում է ջղաձգութեան բռնկում:*

«Արածանի», 1947, ապրիլ 27, թիւ 3, էջ 7:

Ապրիլ 15/28.– *Աքսորականները հասնում են Գելենջիկ եւ 150 հոգով տեղաւորւում են զօրանոցում:*

Նոյն օրը, Գելենջիկ.– *Կոմիտաս վարդապետի մօտ նորից տեղի է ունենում ջղաձգութեան բռնկում:*

«Արածանի», 1947, ապրիլ 27, թիւ 23, էջ 7:

Նոյն օրը, գիշերը.– *Կոմիտաս վարդապետի մօտ ջղաձգութիւնը կրկնւում է:*

Նոյն տեղում:

Ապրիլ 15/28, արշալոյսին.– *աքսորականները Գելենջիկից մեկնում են Զանղլի:*

«Արածանի», 1947, ապրիլ 27, թիւ 23, էջ 7:

Ապրիլ 16/29, Զանղլի.– *Աքսորականները Զանղլիի զօրանոցի մէջ մնում են եօթ օր: Չորրորդ օրը եկեղեցուց բերել են տալիս մի ժամագիրք եւ երեկոյեան կատարում են ժամասացութիւն: Կոմիտասի ջղաձգութիւնը դադարում է: Ութերորդ օրը տրւում է զօրանոցից դուրս քաղաքի մէջ ապրելու իրաւունք:*

«Էջմիածին», 1968, թիւ 8-9, էջ 99:

Ապրիլ 16-26.– *Աքսորականները 11 օր ապրում են Զանղլիի մէջ...*

«Էջմիածին», 1968, թիւ 74 էջ 6:

Ապրիլ 19/2 մայիսի, Զանղլի.– *Կոմիտաս վարդապետը մատուցում է պատարագ եկեղեցու մէջ: Աւետարանը համբուրելու պահին Բիւզանդ Քեչեանը եւ դոկտոր Թորգոմեանը, մօտենալով Կոմիտասին, նրան յայտնում են, որ ստացուել է հեռագիր նրան աքսորից ազատելու մասին: «Պատուական պատարագիչի դէմքը յանկարծ պայծառութեամբ մը շողաց: Իր ուրախութիւնը չէր կրնար ծածկել, նոյնիսկ խուռն բազմութեան առջեւ, ինչը որ կը ցուցնէր, թէ մեր վիճակը որչափ երկիւղ պատճառած էր իրեն»: Այդ նոյն երեկոյեան հեռագիր է ստացւում նաեւ Քելեկեանի ազատութեան մասին:*

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 40:

Ապրիլ 22/5 մայիսի, Զանղլի.– *Զօրանոցային կեանքից յետոյ, առաջին կիրակի օրը, բոլորը մեկնում են փայտաշէն մատուռը՝ «Զօրանոցի հսկաները,– գրում է Շամտաճեանը,– առանց խնկարկութեան էին: Կոմիտաս վարդապետը եւ իւրայինները փլչող փղձկումի մխիթարող խօսք կուտան մեր հոգիներուն»: Քաղաք ելնելէս տասը օր վերջը մեզմէ ութը հոգինոց խումբ մը եկած հրամանի վրայ Պոլիս կը վերադառնայ: Նոր ակնկալութիւններ ու ասպարէզ մըն է, որ կը բացուի ամէնուս համար»:*

© National Library of Armenia

Մ. Շամտաճեան, *Հայ մտքին հարկը եղեռնին*, Հալէպ, 1947, էջ 62:

Ապրիլ 24/7 մայիսի.– *Բանտից Կոմիտասը նամակ է գրում Կարապետ վարդապետին:*

Նոյն օրը.– *Կոմիտաս վարդապետը նամակ է գրում նաեւ Ամերիկեան դեսպանատան թարգմանիչ, Հայազգի Արշակ Շմաւոնեանին:*

Նոյն օրը երեկոյեան.– Մեհտերհանի բանտից երեկոյեան Պազիլ խանին ազատում են եւ նրա անկողինը յատկացնում են Կոմիտաս վարդապետին:

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 34:

Ապրիլ 26/9 մայիս, առաւօտ.– *Ստացւում է ազատման հրաման եւ Կոմիտաս վարդապետի հետ միասին (Բիւզանդ Քէչեան, Վահրամ Թորգոմեան եւ այլոց) եօթը անձնաւորութեան ազատում են բանտից:*

«Էջմիածին», 1968, թիւ 5, էջ 6. *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 40. **Շանթ Շամտաճեան**, 1918, թիւ 5, էջ 7:

Ապրիլ 27/10 մայիսի, երկուշաբթի, Զանղի.– *Կոմիտասն իր բախտակիցների հետ ազատօրէն շրջում է քաղաքում:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

Ապրիլ 28/ 11 մայիսի, երեքշաբթի.– *Ազատուածները Զանղլիից մեկնում են Կ. Պոլիս:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

Ապրիլ 28/11 մայիս, Գալենճիք.– *Աքսորից վերադարձող Կոմիտասը եւ իր ընկերները երեկոյեան հասնում են այս գիւղաքաղաքը. «Թէեւ ուշ հասանք,– պատմում է Բիւզանդ Քէչեանը,– հայ ընտանիք մը չթողուց, որ ազատոտ խանը գիշերենք եւ տաք կերակուրներով հիւրասիրեց մեզ կէս գիշերուան մօտ»:*

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ - 43:

Ապրիլ 29/12 մայիսի, Գալենճիք.– *Աքսորականների խումբը իր ժամանակը անցկացնում է այս գիւղաքաղաքում:*

Նոյն տեղում:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա.– *Ազատուած աքսորականները 16 օր յետոյ, Համբարձման տօնի օրը, կրկին յայտնւում են Էնկիւրայում (Անկարա):*

Կոմիտասը հրաւիրուած էր մասնակցելու տեղի եկեղեցական արարողութեանը:

«Համբարձման տօնը,– գրում է Բիւզանդ Քէչեանը,– վայելեցինք Էնկիւրիի եկեղեցիին մէջ: Թաղ. խորհուրդը մեզի նախաճաշով մը հիւրասիրելէ ետքը առաջարկեց Ս. Աստուածածնի վանք»:

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 43. «Էջմիածին», 1968, թիւ 10, էջ 52:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա.– *Աքսորից վերադարձող Կոմիտասը իր եօթը աքսորականների հետ Էնկիւրիի եկեղեցում տօնում է Համբարձման տօնը: Թաղական խորհուրդը նրանց տալիս է նախաճաշ, այնուհետեւ նրանք մեկնում են Ս. Աստուածածնի վանքը, որտեղ մեծ բազմութիւն էր հաւաքուած Կոմիտասին լսելու համար: Հանդէսից յետոյ 60 հոգու համար բացւում է ճոխ սեղան. մի դեռատի աղջիկ երգում է, որին Կոմիտասը տալիս է խորհուրդներ:*

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 43:

Մայիս 2/15, Կ. Պոլիս.– *Շաբաթ օրը երեկոյեան Կոմիտաս վարդապետը հասնում է Կ. Պոլիս:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

«ՉԱՆՂՐԻ 1915 Թ. ԱՊՐԻԼ 11. ՅԻՇԱՏԱԿ»... ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՆՄՈՅԾԸ

Կարինէ Աւագեան

Եղանի՛ հրակայ, որ քաղցն ու ծարան ունեն պրպտութեան,
որովհետեւ հրանք պիտի յագեսան [Մ.պտպ. Եռ 6]:

Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ 2002 թ. լոյս ընծայեցինք «Եղեռնայուշ Մասունք կամ Խոստովանողք եւ Վկայք Խաչի»[1] *վերտառութեամբ փաստավաւերագիրքը, որն ուսումնասիրութիւնն էր Հայաստանի պատմութեան պետական թանգարանի նոր պատմութեան ֆոնդի 948 համարի տակ պահուող ցուցանմոյշ-համրիչի:*

1908 թ. իրագործած յեղաշրջմամբ երիտթուրքերն, իշխանութեան գալով, շարունակեցին համիդեան հայաջինջ քաղաքականութիւնը:

1915-ի գարնան կէսին արդէն Թալէաթի կարգադրութեամբ լրման հասած «սեւ ցուցակներում» ամրագրուեցին այն հայ մտաւորականները, որոնք իրենց գործունէութեամբ համարւում էին կայսրութեան համար վտանգաւոր տարրեր:

Ցուցակագրումը վստահուած էր Կ. Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն Պետրիին[2] *եւ ՆԳՆ առաջին քարտուղար Մեմտուհին*[3] *(ապա՝ Թալէաթի դրածոյ կառավարիչներից՝ Երզնկայում)*[4]:

Զարագոյժ այս իրողութեան վկայութիւնն է ՀՊՊԹ քննարկուող ցուցանմոյշ-համրիչը, որի անհամաչափ նախամուտ հատին աքսորական մուխթար Վարդերեսը (համրիչի 71-րդ հատի անուանակիրը[5]*) մինչ նահատակուելը փորագրել է. «Զանղրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»...*

Ցաջորդող 99 հատերին աքսորականների ազգանուններն են, երբեմն՝ անունները, թիւ 55-ին եւ 86-ին, համապատասխանաբար՝ «Լեւոն-2», «Օհնիկեանք-4» թուերով, ինչը հաւաստում է 103 աքսորականների մասին:

Ահաւասիկ ցուցանմոյշի ամբողջական բովանդակութիւնը.

«Զանղրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»

1. Կոմիտաս Վ.
2. Յովհան Վ.
3. Քաջունի Քհնյ
4. Ճէվահիրճի
5. Ռ. Սեւակ
6. Միսքճեան
7. Թօփճեան
8. Վարդան Քհնյ.
9. Գ. Ճէլալ
10. Գազազեան
11. Թորգոմեան բժիշկ
12. Պօղոսեան
13. Տինանեան

1 **Կարինէ Աւագեան,** *Եղեռնայուշ մասունք կամ խոստովանողք եւ վկայք Խաչի*, Եր., 2002

2 **Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան,** *Հայ Գողգոթան*, հտ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ 76. նոյնը, II հրտ., Եր.,– «Հայաստան», 1991, էջ 78

3 **Անդրանիկ Ծառուկեան,** *Սէրը Եղեռնին մէջ* (վէպ), Եր., 2004, էջ 9, 19, 40

4 **Թէոդիկ,** *Նոյն տեղում*, «Ճերմակ եւ կարմիր Տոմը», էջ 119

5 Համարակալումը 1-99 կատարուած է անուանակիրներին վկայակոչելու համար:

© National Library of Armenia